



# Նիկողայոս Ադունց 140

**Այունյաց երկիր**  
 2011 թ. հունիսի 14-ին  
 № 21 (240)


ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
**2003**  
 ՎՊԿՏԵՐԵՐԻ 1-ԻՑ

ՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ԳՐԱՏՄԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ՀԱՅՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ՀԵՏԱՄԱՆՄԱՆ ԳՐԱՏՄԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ԷԼԷԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՏՄԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ԷԼԷԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՏՄԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ԷԼԷԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՏՄԱՆ ԵՎ ԳՐԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**2011** թ. դեկտեմբերի 2-ին Սիսիանում՝

Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնում, տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված աշխարհառջակ հայազետ ու բյուզանդագետ Նիկողայոս Ադունցի ծննդյան 140-ամյակին: Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի նախաձեռնությամբ կազմակերպված գիտաժողովին մասնակցելու համար Սիսիան էր ժամանել Երեւանի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանի գլխավորությամբ: ԵՊՀ պատմության կազմում էին նշանավոր ադունցագետ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Յովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկազ Յովհաննիսյանը, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ասիստենտ Գեղամ Բաղայանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Հայրապետյանը: Սիսիան էին ժամանել ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանը, Նիկողայոս Ադունցի ազգական Ռուանդ Ադունցը: Գիտաժողովին մասնակցելու համար Սիսիան էր այցելել «Այունյաց երկիր» թերթի ամբողջ խմբագրակազմը, Գորիսի պետական համալսարանի պատվիրակությունը՝ համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ջարեհ Գրիգորյանի գլխավորությամբ, Գորիսի պետական քոլեջի պատվիրակությունը՝ քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանի գլխավորությամբ, «Նե» ամսաթերթի ստեղծագործական կոլեկտիվը՝ խմբագիր Անահիտ Ամիրյանի գլխավորությամբ, շրջանի գյուղական համայնքների ղեկավարներ: Մինչև գիտաժողովը սկսելը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, Սիսիանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները, Սիսիան ժամանած հյուրերը ծաղկեպսակներ դրեցին Նիկողայոս Ադունցի հուշարձանի պատվանդանին: Գիտաժողովի աշխատանքները վարում էր Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: Գիտաժողովում ելույթ ունեցան պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Յովհաննիսյանը, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկազ Յովհաննիսյանը, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանը, «Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, Սիսիանի Ն.Ադունցի անվան պատմության բանագրանի տնօրեն Ծովինար Պետրոսյանը, Կապանի շրջանի Լեոնաձորի հիմնական դպրոցի տնօրեն Ռոբերտ Գրիգորյանը (Եջանանցի), Ն.Ադունցի ազգական Ռուանդ Ադունցը: Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, ով նաեւ հուշանվերներ հանձնեց գիտաժողովի մի խումբ մասնակիցների: Գիտաժողովում հնչած ելույթների շարադրանքը՝ 6-12 էջերում:

**ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**



## Նիկողայոս Ադունցի 140-ամյակին նվիրված գիտաժողով Սիսիանում

Նիկողայոս Ադունցի հուշարձանը Սիսիանում (1990 թ., հեղինակ՝ Արտաշես Հովսեփյան, ճարտարապետ՝ Ռոմեո Զուլիալյան)



## Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի բացման խոսքը

## Շնորհակալ եմ...



Լուսանկար՝ Գ. ՀԱՎԱԿՆՈՒՄԵՆԻԱՆ

**ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**  
Սիսիանի քաղաքապետ

Պատմության ամեն մի ժամանակ ծնունդ է իրեն յուրահատուկ համճարներ, տաղանդներ, ուժեր, ի վերջո, հավերժի ուղեկիցն են դառնում: Բայց քաղաքական իրավիճակները միշտ չէ, որ սերունդներին հնարավորություն են տվել ըստ արժանվույն գնահատել նրանց: Այդ ամենով հանդերձ չեն ուզում դրա համար մեղավորներ փնտրել, քանզի կա մի պարզ ճշմարտություն՝ չունեինք անկախ պետականություն, եւ մեր ժողովրդի նշանավոր գավակներից շատերը ստիպված էին հաճախ օտար երկրներում փայլել լուսատու աստղի պես եւ մարել այնտեղ՝ երբեմն մնալով պատմության թանձր վարագույրի հետեւում եւ նույնիսկ անգերեզման: Դրանցից մեկը մեր հայրենակից Նիկողայոս Աղոնցն է, ում 140-ամյակն է առիթ դարձել այստեղ հավաքվելու եւ գիտաժողով անկացնելու համար:

Սիսիանի քաղաքապետարանի, համայնքի բնակչության անունից ես ողջունում եմ ներկաներիդ եւ գիտաժողովին մաղթում արդյունավետ ընթացք: Մենք ուրախ ենք, որ հռչակավոր գիտնականի հայրենակիցն ենք, ում գիտական ժառանգությունն ու մարդկային վեհ նկարագիրը ժամանակի մեջ ոչ միայն չեն խամրում, այլեւ նոր փայլ են ստանում՝ դառնալով համամարդկային արժեք: Ծնվելով Հայաստան աշխարհի մի փոքրիկ անկյունում՝ Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում, Նիկողայոս Աղոնցն իր երկրի, նաեւ իր փոքր հայրենիքի անունը հայտնի դարձրեց համայն աշխարհում:

Մատմությունն իր ամենակարող ձեռքով սրբազրում, իր տեղն է դնում ամեն ինչ, ճշտում նաեւ մեծագույն ամհատականությունների տեղն ու դերը ժամանակի ու հավերժության մեջ: Եվ ուրեմն՝ Նիկողայոս Աղոնցը ոչ միայն իր ժամանակին է պատկանում, այլեւ՝ ապագային, նա, հիրավի, հավերժության ուղեկիցն է:

Յուրաքանչյուրիս պարտքն է ներկա եւ գալիք սերունդների մեջ մշտապես վառ պահել Նիկողայոս Աղոնցի վեհ անունը, ուսումնասիրել, հետազոտել այն հսկայածավալ գիտական ժառանգությունը, որ թողել է ինքը: Ներկա գիտաժողովը հենց այդ նպատակն է հետապնդում: Հավատացած եմ, որ Նիկողայոս Աղոնցի գիտական ժառանգությանը հաղորդակից լինելու այլ միջոցառումներ եւս կկազմակերպվեն՝ եւ ոչ միայն Սյունիքում:

Գիտաժողովը՝ նվիրված պատմաբան, հայագետ, բյուզանդագետ եւ մեծ հայրենասեր Նիկողայոս Աղոնցին, հայտարարում եմ բացված:



**ՌՈՒՆՆՈՒ ԱՂՈՆՑ**  
Նիկողայոս Աղոնցի ազգակից

Սիրելի՛ հայրենակիցներ  
Ելույթ ունեցողները գրեթե ամեն ինչ ասացին Նիկողայոս Աղոնցի մասին: Իրենց չափ եւ չգիտեն եւ ավելացնելու բան չունեն: Փոխարենը երախտագիտություն են հայտնում Պետրոս Հովհաննիսյանին, ով ամենադժվար ժամանակներում Աղոնցի գիտական ժառանգության զգալի մասը լույս աշխարհ բերեց եւ գրքեր հրատարակեց: Շնորհակալ եմ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին, ով նախաձեռնեց եւ բարձր մակարդակով կազմակերպեց այս գիտաժողովը: Շնորհակալ եմ ԵՊՀ-ի գիտնականներին, ովքեր միշտ էլ հետաքրքրվել են Աղոնց գիտնականով եւ հնարավորինս Պետրոս Հովհաննիսյանի կողքին են եղել: Չեմ կարող չհիշել նաեւ Հենզել Առաքելյանին, ում նախաձեռնությամբ ժամանակին կառուցեց Նիկողայոս Աղոնցի հուշարձանը Սիսիանում:

## Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եզրափակիչ խոսքը

Հարգարժան հյուրեր, սիրելի սիսիանցիներ  
Գիտաժողովը, որ ծրագրել էինք Նիկողայոս Աղոնցի 140-ամյակի առիթով, իրականություն դարձավ: Վերջապես իր բնօրրանում հիշեցինք ու մեծարեցինք մեր մեծ, աշխարհահռչակ հայրենակիցին: Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր ներկաներին եւ հատկապես գիտության ներկայացուցիչներին, ովքեր այսօր հանդես եկան հետաքրքիր ելույթներով եւ, առհասարակ, սատարեցին մեզ՝ կազմակերպելու սույն գիտաժողովը: Շնորհակալու-

թյուն եմ հայտնում պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանին, «Այուրյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին՝ մեր նախաձեռնությանը սատարելու համար: Տպավորություն ունեն, որ այս միջոցառումը, հնչած ելույթները պետք են գալու մատաղ սերնդին՝ պատմագիտության, բանասիրության, հայերենագիտության ոլորտներում քայլեր անելու եւ մեր մեծ հայրենակիցին ավելի լավ ճանաչելու գործերում: Այսօր Սիսիանում էր նաեւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, նա հարգանքի տուրք մատուցեց

մեծ հայագետի հիշատակին: Գործի բերումով նա չկարողացավ մասնակցել սույն գիտաժողովին, բայց լիազորեց հայտարարել, որ քաղաքի հանրակրթական դպրոցներից մեկը կկոչվի Նիկողայոս Աղոնցի անվամբ:

Գիտաժողովն ավարտելուց առաջ եւս մեկ անգամ հույս եմ հայտնում, որ այսպիսի միջոցառումները՝ միտված Նիկողայոս Աղոնցի գիտական ժառանգության քննարկմանն ու տարածմանը, շարունակական կլինեն նաեւ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում:

Հիշո՛ւմ եք Համո Սահյանի պատ-

վիրանը.  
*Անվերջ, անչարժ ձեր երթում  
Ինձ բացակա չդնեք...*

Մեծ բանաստեղծը միայն իր համար չէր, կարծեք, մեկնել այդ պատվիրանը: Այն բոլոր մեծերի համար է ասված, այդ թվում՝ Նիկողայոս Աղոնցի: Այնպես որ՝ այսօր մենք նաեւ Համո Սահյանի պատվիրանը կատարեցինք: Իսկ հիմա, թույլ տվեք, բանաստեղծուհի Մելանյայի պատրաստած հուշանվերները հանձնել ելույթ ունեցողներին՝ կրկին հայտնելով Սիսիանի քաղաքապետարանի երախտագիտությունը: ■



**Համո Սահյանի անունը կրող մշակույթի կենտրոնը, որի դահլիճում դեկտեմբերի 2-ին փեղի ունեցավ Ն.Աղոնցին նվիրված գիտաժողովը:**





# ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻՆ



Լուսանկար՝ Զ. ՎԱՍԻՍԻԱՆԻ ԽՍԻՍՏՅԱՆ

Պատկերը Միսիսիանի Նիկողայոս Աղոնցի հուշարձանին

## Նիկողայոս Աղոնց. դժվարին, բայց ճշմարիտ չափորոշիչ



Լուսանկար՝ Զ. ՎԱՍԻՍԻԱՆԻ ԽՍԻՍՏՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Միսիսիանի Ն. Աղոնցի անվան թանգարանի տնօրեն

Պատմափայլ հորենացի ստան էր. «Քաջերի սահմանն իրենց զենքն է»: Աղոնցն ավելացնում է՝ «Քաջերի սահմանն այնքան զենք է, որքան այն հոգեկան մղումը, որ տանում է դեպի զենքը»: Այստեղ գտնվողներիս հոգեկան մղումն էր, որ իրողություն դարձրեց այս միջոցառումը: Ընդհանրապես եմ Միսիսիանի քաղաքապետ պարոն Աղասի Հակոբյանյանին՝ իր գործադրած ջանքերի համար, նաեւ բոլոր մասնակիցներին: Աղոնցը, այս հող ու ջրի մեծ զավակը, ավելի քան արժանի է մեր խոնարհումին՝ իր աշխարհ գալու 140-րդ տարում:

# Ծննդով սիսիանցի աշխարհահռչակ հայագետը



ԼԵՎՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

վան կապակցությամբ գրած «Հայոց պատմագիտության մեջ նրա տեղը երկար ժամանակ բաց կմնա» տողերը: Իսկապես, հայագիտությունը մինչ այսօր հասարակությանը չի տվել Աղոնցի մեծությամբ հայասեր գիտնական, որը շարունակելով նրա գործը եւ կարողանալով նոր նյութերի խորը քննությամբ մշակել միանգամայն նոր համակարգ ու զարգացնել հիմնավորված նորովի մտածումներ ու տեսակետներ:

Ես ցանկանում եմ անդրադառնալ Նիկողայոս Աղոնց վիթխարի անհատականության կենսագրական տեղեկությունների եւ ազգային-հասարակական գործունեության մանրամասներին, որպեսզի բացահայտվի այն գիտակրթական ու մշակութային հզոր միջավայրը, որը դաստիարակեց հայրենասեր ու նվիրյալ գիտնականին, ձեւավորեց նրա աշխարհայացքը, բնավորության գծերը, հոգեհարազատությունն ազգային արժեքների ու ավանդույթների նկատմամբ եւ որպես քաղաքացու հատկանիշներն ու մեծագույն պատկառանքն առ հայոց եկեղեցին:

...Այդ ամենը զալիս եր ոչ միայն վանական բարենպաստ միջավայրից, այլեւ տարբեր մարիմերին նրան դասավանդած ակադեմիկոս ուսուցիչներից, ճանաչված մանկավարժներից, ինչպիսիք էին Ստ. Պալասանյանը, Մ. Օրմանյանը, Ս. Մանդիկյանը, Ս. Գալստյանը, Ստ. Լիսիցյանը, Յուլի. Յուլիանիսյանը, Ն. Սառը, Ն. Վեսելովսկին, Վ. Ժուկովսկին, Ֆ. Կոնիսերը եւ այլք, այնպես էլ նրա հասակակից կամ ավագ ու կրտսեր աշակերտական դասընկերներից՝ Սանուկ Աբեղյանից, Ավ. Իսահակյանից, Ներսես Մելիք-Թամզյանից, Կարապետ Տեր-Սկրտչյանից, Գեորգ Չորեքչյանից, Ավետիս Ահարոնյանից, Գուրգեն Ղուկասիանից, Սողոմոն Սողոմոնյանից եւ ուրիշներից, ովքեր դարձան հայոց գիտամշակութային կյանքի եւ եկեղեցու ակադեմիկոս դեմքեր:

Միսիսիանցի ազգային-հասարակական գործունեությունը, ինչը բնութագրում է նրան որպես անհատի, քաղաքացու, անմնացող հայրենասերի: Աղոնցին միշտ հուզել է ազգային հարցը: Կարեւոր դեր են խաղացել 1912-1914թթ. Մ. Պետերբուրգում հայկական հարցի կապակցությամբ հրավիրված խորհրդակցությունները: Հենց Սանուկ-Պետերբուրգի հայկական կոմիտեի հանձնարարությամբ եւ ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության հավանությամբ 1912թ. վերջերին Գ. Տիգրանյանի ուղեկցությամբ Ն. Աղոնցն այցելեց Կ. Պոլիս, որտեղ գործնական համոզմունքներ ունեցավ համայնքի նշանավոր դեմքերի հետ՝ Մ. Օրմանյանի, Գր. Զոհրապի, Գ. Նորատունկյանի, Ն. Տաղավարյանի եւ ուրիշների, որոնց փորձեց կողմնորոշել դեպի Ռուսաստան: Ն. Աղոնցը հավանացած էր, որ բարեմոտությունները Արեւմտյան Հայաստանում կամ հայկական ինքնավարության կերտումը հնարավոր է սուկ Ռուսաստանի հովանավորությամբ: Ն. Աղոնցը կազմակերպչական կարեւոր դեր խաղաց 1916թ. մայիսին Պետրոգրադում գումարավոր հայկական խորհրդակցությանը՝ Նա օգնել է զենքերալ Բ. Քաղաքատունում հայկական բանակային կորպուսի կազմակերպման ուղղությամբ: Նա գործուն մասնակցություն է ունեցել Բրեստ-Լիտվսկիի հաշտության բանակցությունների ժամանակ, հայկական հարցի վերաբերյալ Վ. Տերյանի տրամադրության ներքո գտնվող թղթածրարի ստեղծման աշխատանքներին: Միաժամանակ նա պետրոգրադյան ամսագրերում տպագրում է իր խիստ ուշագրավ հոդվածները՝ նվիրված

հայկական հարցին, որոնցում մատնանշում էր դրանց լուծման ուղիները: Հայկական հարցի թեմատիկան եւ Հայաստանի ներկա կացությունը միշտ մտահոգում էին նրան: Մինչեւ վերջին շունչը հայրենասեր պատմաբանը հավատարիմ մնաց իր իդեալներին, այն է, որ ցանկացած ազգ կենդանի է մնում իր լեզվով, հավատքով ու պատմությամբ: Նա ամեն ինչ արեց, որպեսզի կարելու գիտական ուսումնասիրությունները ծառայեն Հայաստանի անկախության, պետության ամրապնդմանն ու երկիրը միասնական տեսնելու նպատակին: Պատահական չէ, որ նրա հեղինակած 120-ից ավելի աշխատություններում՝ նվիրված հայ ժողովրդի հին, միջնադարյան եւ նոր պատմությանը, գրականությանը, բյուզանդագիտությանը, կովկասագիտությանը, հայոց եկեղեցու պատմությանն ու լեզվաբանությանը, մեծ տեղ է տրված հայկական հարցի լուծմանը: «Հայկական հարցը Սեւրում», «Քրդերի ներթափանցումը Հայաստան», «Հայկական հարցը ամերիկյան սեմաթում», «Հայկական հարցի շուրջ թուրքիայում» եւ այլ աշխատություններում ոչ միայն լուսաբանված էին մեր ժողովրդի ազգային իրատապ խնդիրները, այլեւ նախանշված դրանց լուծման ուղիներն ու ապագա հզոր Հայաստանի աղոնցյան տեսլականը:

Վերջում կցանկանայի իմ շնորհակալությունը հայտնել միջոցառման կազմակերպիչներին եւ նշել, որ ԵՊՀ պատմության ֆակուլտետում Ն. Աղոնցի հիշատակը հավերժացվել է գերազանցիկ ուսանողներից մեկին՝ Ն. Աղոնցի անվան կրթաթոշակ նշանակելով: Նախատեսվում է առաջիկայում Ն. Աղոնցի անվան լսարան բացել ֆակուլտետում եւ կազմակերպել Ն. Աղոնցի պատմական ժառանգությանը նվիրված գիտական կոնֆերանս:

Հարգարժան սիսիանցիներ, հարգելի հյուրեր, չափազանց ուրախ եմք, որ հայ ակադեմիկոս հայագետ, աշխարհահռչակ պատմաբան, բանասեր, բյուզանդագետ, կովկասագետ Նիկողայոս Աղոնցի 140-ամյակը նշվում է իր ծննդավայրում, իր հայրենակիցների՝ սիսիանցիների եւ հարգարժան հյուրերի մասնակցությամբ: Ցավալի իրողություն է, որ Ն. Աղոնցի կյանքն ու գործը դեռեւս չեն արժանացել պատշաճ ուշադրության: Հայ պատմաբանական միտքը դեռեւս ամբողջությամբ չի տվել նրա կյանքի եւ գործունեության անկողնակալ ու արժանի գնահատականը: Այսօր, երբ պատմական իրադարձությունների հեռվից դիտարկում են Աղոնց անհատի հայրենասիրական նվիրումներն ու վիթխարի ձեռքբերումները, երիցս վերհիշում են պատմաբան Գառնիկ Գյուլապյանի՝ Ն. Աղոնցի մահ-



## «Այունյաց երկրի» Նիկողայոս Արոնցին նվիրված համարը



Լուսանկար՝ Զ. ԳԱՍՊԱՐՈՒՄՅԱՆԻ

### ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ «Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր

Համո Սահյանի անունը կրող նշակալի այս կենտրոնում ուշագրավ իրադարձություն է տեղի ունենում: Նշվում է աշխարհահռչակ հայագետ ու բյուզանդագետ Նիկողայոս Արոնցի ծննդյան 140-ամյակը: Եվ, հարգարժան գիտնականների մասնակցությամբ, եւս մեկ հայացք

ենք ձգում մեծ հայրորդ գիտական ժառանգությանը:

«Այունյաց երկիրը» տեւական ժամանակ պատրաստվել էր այդ հոբելյանին եւ հոկտեմբերի 15-ին թողարկել թերթի հատուկ համար: Մինչ դրան անդրադառնալով, գոհունակությամբ ջերմ խոսքեր են հղում Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին՝ այս գիտաժողովը կազմակերպելու, «Այունյաց երկրի» նշված համարի տպագրությունը ֆինանսավորելու համար: Գոհունակության խոսքեր են ուղղում նաեւ Գագիկ Խաչատրյանին՝ Սյունիքի սերնդարտադրողների միության նախագահին, Բռնակոթի գյուղապետ Ատոմ Առաքելյանին՝ համարի տպագրությանն աջակցելու համար: Գագիկ Խաչատրյանի հետ մտադրություն ունենիք, այդ ծրագրի շրջանակում, պատրաստել մի գեղանկար, որ կարտացոլեր Մեսրոպ Մաշտոցի այցը Սյունիքի հոգեւոր ու քաղաքական կենտրոն՝ Շաղատ, նրա համդիպումը Հայաստանի եւ Վրաստանի մարզպան Վասակ Սյունու հետ: Նկարչի՝ Ռոբերտ Կամոյանի առողջության հետ խնդիրներ առաջանալու պատճառով այդ մտադրությունը չիրականա-

ցավ: Փոխարենը Ռոբերտ Կամոյանն ավարտին հասցրեց Նիկողայոս Արոնցի գեղանկարը, որ գետեղված է համարի առաջին էջում:

Մեր խմբագրակազմի, ընթերցողների երախտագիտությունն ենք փոխանցում պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանին՝ համարի պատրաստման ամբողջ ընթացքում մեզ սատարելու, քաջալերելու, արժեքավոր խորհուրդներ տալու համար: Ինքն էր առաջինը, որ առաջարկեց Նիկողայոս Արոնցին նվիրել թերթի հատուկ համար: Դա 2009-ին էր՝ Ազգային ժողովում՝ Ղեւոնդ Ալիշանի վերահրատարակված «Սիսականի» շնորհանդեսի ժամանակ: Ներկա գտնվողներին այդ օրը բաժանել էինք «Այունյաց երկրի» Ալիսեւ Բակունցին նվիրված համարի օրինակներ: Թերթին ծանոթանալուց հետո պարոն Հովհաննիսյանն առաջարկեց նման մի համար էլ նվիրել Նիկողայոս Արոնցին: Առաջարկը հաճույքով ընդունեցինք եւ սկսեցինք ծրագրել անելիքները:

Մեր թերթում քանիցս արտահայտած մի կարծիք ունենք, որ հարկ են համարում բարձրաձայնել նաեւ այստեղ: 2003 թվականից՝ թերթի հիմ-

նադրման ժամանակից, անկախ առկա բազում դժվարություններից ու պրոբլեմներից, զբաղվել ենք նաեւ թեմատիկ համարների թողարկմամբ, որի համար կար բարենպաստ մթնոլորտ: Այդ ամենի արդյունքում էր, որ անցած ութ տարում կարողացանք հրատարակել թերթի 15 թեմատիկ համար: Դրանց տպագրությունը ֆինանսավորել են՝ նախ՝ Մաքսիմ Հակոբյանը («Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ տնօրեն), ապա Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը, ուրիշներ: Այսօր էլ նման ծրագրեր ունենք՝ կապված Կապանի գլխավոր սրբավայրի՝ Վահանավանքի կամ Հովհաննավանքի հիմնադրման 1100-ամյակին, ինչպես եւ Մեղրու պատմությանը: Այդ ծանր աշխատանքը բոլոր ժամանակներում կատարել եւ կատարում է «Այունյաց երկիր» խմբագրակազմը՝ իր բարեկամների, ճանաչված գիտնականների հետ, որոնց նույնպես շնորհակալություն ենք հայտնում:

Հիմա՝ Նիկողայոս Արոնցին նվիրված համարի մասին: Ի՞նչ խնդիրներ ենք դրել մեր առջեւ. 15 տպագրական մասնու ծավալով նյութի օգնությամբ ընթերցողին ճանաչելի դարձնել մեծ գիտնականին, ներկայացնել նրա հայրենի եզերքը, հնարավորություն տալ ընթերցողին՝ ընդհանուր պատկերացում կազմել Նիկողայոս Արոնցի գիտական ժառանգության մասին, եւ, իհարկե, հնարավորություն պատահանից, հնարավորինս, հայացք ձգել դեպի Սյունիքի անցյալը:

Թե որքանով ենք կարողացել այդ խնդիրները լուծել՝ ընթերցողը պետք է ասի, մասնագետները պետք է ասեն: Խմբագրության անունից մի բան կարող են հավաստել՝ հնարավոր ամեն ինչ արել ենք, որ առաջարկված խնդիրն ըստ պատշաճի կատարվի:

Թողարկված համարն օբյեկտիվորեն գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում մի հիշեցում անել: Թերթի ծավալը, արդեն նշեցի, 15 տպագրական մասնու է: Ավելի մեծ ծավալով թերթ թողարկելու հնարավորություն չունեինք: Ավելի մեծ ծավալով թերթ տալու դեպքում էլ, սակայն, չէինք կարող ներկայացնել լուսաբանել բոլոր այն հարցերը, որոնք կարելու են թեմայի համար, որոնք մեր հետաքրքրությունների շրջանակում են:

Իսկապես, կուզենայինք խոսել նաեւ նախորդ սերնդի աղոնցագետների (մասնավոր՝ Կարեն Յուզբաշյանի), Նիկողայոս Արոնցի գլխավոր գործերի թարգմանչների (Խոնդկարյաններ, Վ.Սեղբոսյան, Օ.Վարդապետյան, Վ.Գիլոյան եւ ուրիշներ), Ն.Արոնցի մի շարք այլ կարեւոր գործերի, Արոնցի գիտական ժառանգության հրատարակման երբեք զբաղված թերթերի, ամսագրերի եւ հրատարակչությունների (մասնավորապես՝ ԵՊՀ հրատարակչություն, «Հայաստան», «Հայագիտակ», «Բավիղ» եւ այլն) մասին, բայց նշված պատճառով չստացվեց: Ցանկություն ունեինք համարում գետեղել Նիկողայոս Արոնցի գիտական ժառանգության մատենագիտությունը, մասնավոր՝ որ այն՝ հեղինակությամբ Պետրոս Հովհաննիսյանի, պատրաստ էր՝ թեեւ ծավալում եւ անտիպ: Դա նույնպես չստացվեց: Այդուհանդերձ համարում կարողացանք ըստ



Լուսանկար՝ Զ. ԳԱՍՊԱՐՈՒՄՅԱՆԻ



Փիլաժողովի նախագահությունը



ԳԻՏԱԺՈՂՈՎՆԻՒՆ ԵՎ ԻՎԱՆՆԻՍԻՆԻ ԵՎ ԵՎԻՍԿՈՎՈՍ ԵՎ ԵՎԻՍԿՈՎՈՍ ԵՎ ԵՎԻՍԿՈՎՈՍ

Ճակատագրական երեք ստորագրություն Նիկողայոս Արոնցի կենսագրությունում



Լուսանկար՝ Գ. ՉԱԿՄԱՆԻՍՅԱՆԻ

ՊԵՏՐՈՍ ԳՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Այսօր Սիսիանը նշում է իր մեծ հայրենակցի՝ Նիկողայոս Արոնցի ծննդյան 140-րդ տարեդարձը: Սա հարգանքի տուրք է ակամավոր հայազետի անմար հիշատակին, ով կյանքն անմահացող միակն էր ոչ միայն գիտությանը, այլև իր հարգատ Ժողովրդին, որի զավակը լինելու պատիվը նա երբեք չնռաջավ ոչ Ս.Պետերբուրգում, ոչ Լոնդոնում, ոչ Փարիզում եւ ոչ էլ Բրյուսելում: Անշուշտ, այժմ կլինեն հավուր պատշճի խոսքեր նրա կյանքի եւ գործի վերաբերյալ: Զցանկանալով տուրք տալ ավանդույթին, որոշեցի այսօր խոսել նրա կենսագրության քիչ հայտնի այն փաստերի մասին, որոնք նման հանդիսավոր միտերի ժամանակ չեն սավում:

Խոսքը երեք ստորագրության մասին է, որ այնքան ճակատագրական դեր խաղացին Արոնց հայագե-

տի, քաղաքացու, մարդու եւ մտավորականի կերտման գործում:  
Առաջին ստորագրությունը պատկանում է ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանին, որը կյանքի ու գիտության ճանապարհացույց եղավ երիտասարդ Արոնցի համար: 1891թ. Արոնցը հեռացավ Սբ Էջմիածնի Գեորգյան ճեմարանի լսարանական երրորդ կուրսից՝ ուսումնառությունը թիֆլիսի ռուսական գիմնազիայում շարունակելու մտադրությամբ, որը նրան հնարավորություն կտար ուսումնառություն ստանալ Եվրոպական որեւէ համալսարանում: 1894թ. Արոնցն ավարտում է թիֆլիսի ռուսական 2-րդ դասական գիմնազիան եւ անմիջապես դիմում է ներկայացնում Ալ.Մանթաշյանին՝ իր հետագա ուսումնառությունը թռչակավորելու խնդրանքով: Ծանոթանալով դիմումին՝ Մանթաշյանը ցանկացել է անձամբ տեսնել Արոնցին, որի անառողջ, չափազանց միհար ֆիզիկական կերպարը որեւէ դրական ազդեցություն չթողեց բարերարի վրա: Մանթաշյանը չէր կողմնորոշվում ստորագրել նրա դիմումնագիրը, թե ոչ: Անպաճույճ գրույցը երիտասարդի հետ, որը վերաբերում էր հայոց կյանքին այդ ժամանակ հետաքրքրող հարցերին, միանգամից ուղղորդեց Մանթաշյանին, որը հուճորով նկատեց:  
- Նիկողայոս, դու համարյա արդեն կես համալսարանի չափ գիտելիք ունես, կմնա մյուս կեսը յուրացնել, -եւ ստորագրեց դիմումնագրի ներքո:  
«Համարել սան եւ նշանակել թռչակ»:  
Ալ.Մանթաշյանի նշանակած թռչակով Ն.Արոնցը 1894 թվականից սովորել է Դորպատի (Տարտու) եւ



Գիտաժողովը տեղի ունեցավ Համո Սահյանի անունը կրող մշակույթի կենտրոնում, որի լեհ-լեցուն դահլիճը մութ երեք ժամ համակ ուշադրությամբ ունկնդրեց ներկայացվող ելույթները:

Ս.Պետերբուրգի համալսարաններում (մինչեւ 1899 թվականը), իսկ 1899-1902թթ. կատարելագործվել Լոնդոնում, Սյունիսենում, Փարիզում, Վենետիկում: Իրոք, որ ճակատագրական ստորագրությունն էր:  
Երկրորդ ստորագրությունը պատկանում է Ռուսաց կայսր Նիկոլայ II-ին: 1916թ. Ս.Պետերբուրգի համալսարանի հայկական եւ վրացական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր Նիկողայոս Մառը աշխատանքի է տեղափոխվում Գիտությունների ակադեմիայի նախագահություն, եւ նրա հաստիքը ամբիոնում մնում է թափուր: Մրցույթին մասնակցել ցանկացողների թիվը շատ էր, այդ թվում նաեւ Արոնցի դասընկեր, ազգությամբ վրացի Իվանե Զավախովը: Սակայն, ինչպես ամբիոնը, այնպես էլ համալսարանի ղեկավարությունը եւ անձամբ ինքը Ն.Մառը, գտնում էին, որ ամենաարժանավորն Արոնցն է, որն էլ փակ քվեարկությամբ ընտրվեց այդ ամբիոնի պրոֆեսոր: Ընդունված

կարգի համաձայն ընտրությունը պետք է վավերացվեր հենց իր կայսրի ստորագրությամբ: Նիկոլայ II-ը, երկրին անհրաժեշտ այլ փաստաթղթերի հետ Արոնցին պրոֆեսորի հաստիք տալու հրամանը ստորագրեց 1917թ. մարտի 1-ին: Ի դեպ, մեկ օր անց Նիկոլայ 2-րդը հրաժարվեց գահից: Այդ ստորագրությունը նոր էջ բացեց հայրդու կյանքում, նա դարձավ Եվրոպայի լավագույն համալսարաններից մեկի պրոֆեսորը, որը նրան ապահովվում էր Ռուսաստանի մտավոր էլիտայի շարքերում մի մնալուն տեղ: Հետագա իր ամբողջ կյանքում նա այդպես էլ ստորագրում էր « Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր»:  
Երրորդ ստորագրությունը պատկանում է հորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ.Ի.Ուլյանովին (Լենին):  
Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան իշխանությունները բոլոր համալսարաններից

անհապաղ հեռացրեցին պրոֆեսորա-դասախոսական կազմի այն ներկայացուցիչներին, որոնք անբարեխոյս էին թվում: Վ.Ի.Լենինը անձամբ էր ստուգում երկրի զույգ առաջնային նշանակություն ունեցող համալսարանների դասախոսների ցուցակը՝ Մոսկվայի եւ Պետրոգրադի: Ռուսաստանի կենտրոնական պատմական արխիվի ֆոնդերից մեկում է գտնվում Վ.Ի.Լենինի ստորագրությամբ հաստատված 80 պրոֆեսորների մի ցուցակ (19 ապրիլի, 1918թ.), որոնք կարող էին շարունակել իրենց դասախոսական աշխատանքը Պետրոգրադի համալսարանում: Այդ ցուցակում վեցերորդն Արոնցի ազգանունն էր: Այդ ստորագրության շնորհիվ էր, որ նա մինչեւ 1920թ. ապրիլը շարունակեց դասավանդել եւ զբաղվել գիտական աշխատանքներով, որոնք, սակայն, անապատելիորեն ընդհատվեց, 1920թ. ապրիլին անձնական նկատառումներով ընդմիջտ հեռացավ Ռուսաստանից:

Մեծարենք մեր մեծերից յուրաքանչյուրին



Լուսանկար՝ Գ. ՉԱԿՄԱՆԻՍՅԱՆԻ

ԳՐԻՇԱ ՂԱՐԻՔՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից-անդամ, փնտրեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ես մի քանի ցանկություն եմ ուզում հայտնել: Պետրոս Գովհանմիսյանը երկու ամիս առաջ հեռուստատեսությամբ բնութագրեց Նիկողայոս Արոնցին մի քանի բառով: Առաջին բնութագրումն այն էր, որ Արոնցը հայոց պատմությունը հազար տարի հետ տարավ, երկ-

րորդն այն էր, որ նա այնպիսի դեր խաղաց պատմագրության մեջ, ինչպես Թունանյանը՝ գրականության, Թամանյանը՝ ճարտարապետության, Աճառյանը՝ լեզվաբանության, Աբեղյանը՝ գրականագիտության, Վիկտոր Համբարձումյանը՝ աստղագիտության մեջ: Այդ բնորոշումներով նա ընդգծեց գիտության այդ հսկայի տեղը պատմագիտության, հայագիտության, բյուզանդագիտության մեջ: Ըստ երեւույթին 40 տարեկան հասակում Արոնցն արդեն գիտնական էր, բայց պահանջվեց եւս հարյուր տարի, որպեսզի ճշտվի նրա տեղը գիտության մեջ, ներկայացվի ըստ պատշաճի: Իհարկե, դրանում մեղավորը ժամանակն էր, բայց ուզում եմ նաեւ մեր մեղքը չքողարկել: Մենք՝ սյունցեցիներս, շատ համեստ ենք, ինչը, անշուշտ, լավ հատկանիշ է: Բայց ամեն մի համեստություն, որ չափից անցնում է, բացասական երանգ է ձեռք բերում: Մենք Սյունիքի աշխարհահռչակ զավակին թողեցինք, որ դառնա 140 տարեկան ու նոր միայն մեծարենք:  
Ես մեծ ուրախությամբ մասնակից եղա այս գիտաժողովին: Բոլոր ելույթ ունեցողները եւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր պարոն Ալեք-



Գիտաժողովի դահլիճում

սանյանը շատ բանիմացությամբ, խորությամբ ներկայացրին Նիկողայոս Արոնցի ով լինելը, որը գովելի է: Մի քանի տարի առաջ լսեցի Ալեքսեյ Կիրակոսյանի հեռուստաեկույթը: Նա դիմեց մեր իշխանություններին՝ հորդորելով՝ թեք ուզում եք Հայաստանն ամուր լինի, ապա նախենառաջ պետք է մտածել Սյունիքի մասին: Դժբախտաբար, Սյունիքն ու-

շարժության կենտրոնում չգտնվեց, եւ շարունակում է ուշադրության կենտրոնում չմնալ մինչեւ հիմա: Մենք չունենք մեծահարուստ օլիգարխներ: Կրկնեցայի, որ շատ ունեցալիք: Բարեբախտաբար, ունենք հսկա պատմական ժառանգություն՝ աստղադիտարանը Սիսիանում, միջնադարյան համալսարանը Տաթևում: Մենք ունենք Ակսել Բակունց,

Նիկողայոս Արոնց, Համո Սահյան, Արտաշես Գովսեփյան եւ հարյուրավոր գիտնականներ ու ակադեմիկոսներ: Մեր խնդիրն է՝ նրանց չթողնել ստվերի մեջ, մեր խնդիրն է՝ այսօրվա պես մեծարել նրանցից յուրաքանչյուրին, որպեսզի աշխարհն իմանա, թե ինչ է իրենից ներկայացնում Սյունիք աշխարհը:









## ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՆՑԻՆ



# Սյունյաց վեհագուլյն լեռան՝ Կապուրջուղի (Աժդանականի) գագաթը՝ Նիկողայոս Արոնցի անվամբ



Դեկտեմբերի 2-ին Սիսիանում կայացած գիտաժողովում այդպիսի առաջարկությամբ է հանդես եկել Կապանի շրջանի Լեռնաձորի հիմնական դպրոցի տնօրեն Ռոբերտ Գրիգորյանը (էջանանցին): Գիտաժողովի մասնակիցները բուռն ծափահարություններով են արձագանքել այդ առաջարկությանը և հույս հայտնել, որ Հայաստանի Հանրապետության երկրորդ բարձր լեռնագագաթը (Արագածից հետո)՝ 3904մ բարձրությամբ, շուտով պաշտոնապես կկրի աշխարհահռչակ գիտնականի անունը:

### Ընդունելությունն նշանավոր օրվա առիթով



Սիսիանի քաղաքապետ Ադասի Հակոբջանյանը «Օազիս» ռեստորանային համալիրում կազմակերպեց գիտաժողովին մասնակցող հյուրերի, Սիսիանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքային համայնքի ավագանու անդամների, համայնքի մրավորականության ներկայացուցիչների, շրջանի գյուղական համայնքների ղեկավարների ընդունելություն:

